

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

30.06.2021թ. № 13 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան



ԿԱՐԳ

**«Վ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ««Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՊՀ) միջազգային շարժունության» կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ԲՊՀ-ի միջազգային շարժունության տեսակները, տևողությունը, պայմանները, կազմակերպումը, ֆինանսավորման ձևերը, դիմելու և վերջնարդյունքների ճանաչման ընթացակարգերը:

2. Կարգի իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական» կրթության մասին ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը», ԲՊՀ-ի կանոնադրությունը և իրավական այլ ակտեր:

3. Կարգի նպատակներն են.

1) խթանել ԲՊՀ-ի միջազգայնացումը և բարձրացնել տեսանելիությունն ու գրավչությունն ազգային և միջազգային մակարդակներում,

2) նպաստել կրթության որակի բարձրացմանը ԲՊՀ-ում՝ ներդնելով ուսումնառության և դասավանդման ժամանակակից ձևեր ու տեխնոլոգիաներ,

3) բարելավել ԲՊՀ-ի շրջնավարտների զբաղվածությունը՝ ապահովելով նրանց մրցունակությունը ազգային և միջազգային աշխատանքային շուկաներում:

II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

4. Միջբուհական համագործակցության, այդ թվում՝ համատեղ կրթական ծրագրի կամ ակադեմիական փոխանակման համաձայնագրի շրջանակներում, կամ սովորողի սեփական նախաձեռնությամբ միջազգային շարժունության իրականացման համար

բարձրագույն ուսումնական հաստատությունը (այսուհետ՝ բուհ) ուղարկում է իր սովորողին հյուրընկալող բուհ հետևյալ նպատակներով՝

- 1) համատեղ կրթական ծրագրով ուսումնառելու համար,
- 2) որոշակի դասընթացներ (մոդուլներ) ուսումնառելու համար,
- 3) ուսումնական, հետազոտական կամ մասնագիտական պրակտիկա (այսուհետ՝ պրակտիկա) անցնելու համար,
- 4) հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար,
- 5) վերապատրաստման, աշխատաժողովի, գիտաժողովի, սեմինարի, ամառային դպրոցի կամ գիտակրթական այլ միջոցառման մասնակցելու համար:

5. Միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման համաձայնագրի շրջանակներում, ինչպես նաև բուհի դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատողի (այսուհետ՝ աշխատող) սեփական նախաձեռնությամբ միջազգային շարժունության իրականացման համար բուհը գործուղում է իր աշխատողին հյուրընկալող բուհ հետևյալ նպատակներով՝

- 1) որոշակի դասընթացներ (մոդուլներ) դասավանդելու համար,
- 2) դասախոսություններով հանդես գալու համար,
- 3) գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու համար,
- 4) մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստման կամ աշխատաժողովի, գիտաժողովի, սեմինարի կամ գիտակրթական այլ միջոցառման մասնակցելու համար:

6. Կարգի շրջանակերում սահմանվում են ԲՊՀ-ի միջազգային շարժունության հետևյալ ձևերը՝

1) **արտազնա շարժունություն**, որը ԲՊՀ-ի սովորողի կամ աշխատողի սույն Կարգի 4-րդ և 5-րդ կետերում սահմանված նպատակներից որևէ մեկի իրականացման համար այցն է օտարերկրյա բուհ,

2) **ներգնա շարժունություն**, որը օտարերկրյա բուհի սովորողի կամ աշխատողի այցն է ԲՊՀ սույն Կարգի 4-րդ և 5-րդ կետերում սահմանված նպատակներից որևէ մեկի իրականացման համար:

7. ԲՊՀ-ի սովորողի արտազնա շարժունությունը կարող է իրականացվել նաև նրա սեփական նախաձեռնությամբ, սակայն միայն հետևյալ դեպքերում.

1) շարժունության ծրագիրն իրականացվում է հավատարմագրված օտարերկրյա բուհում, որի հետ ԲՊՀ-ն կնքում է միջբուհական համագործակցության համաձայնագիր կամ ձեռք է բերում շարժունության գործընթացի կազմակերպման վերաբերյալ համապատասխան համաձայնություն,

2) դասընթացները (մոդուլները), որոնք շարժունության ծրագրի ընթացքում սովորողը պետք է ուսումնառի օտարերկրյա բուհում և արդյունքում ձեռք բերվող վերջնարդյունքները համապատասխանում են այն մասնագիտության կրթական ծրագրի (այսուհետ՝ ՄԿԾ) դասընթացներին և ուսումնառության վերջնարդյունքներին, որով սովորողն ուսումնառում է ԲՊՀ-ում,

3) շարժունության ծրագրի ընթացքում օտարերկրյա բուհում սովորողի կողմից իրականացվելիք պրակտիկայի կամ հետազոտական աշխատանքների նպատակները, համապատասխանում են այն ՄԿԾ-ի նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին, որով սովորողն ուսումնառում է ԲՊՀ-ում,

4) վերապատրաստումը կամ գիտակրթական միջոցառումը, որին շարժունության ծրագրի շրջանակներում սովորողը պետք է մասնակցի օտարերկրյա բուհում համապատասխանում է սովորողի ուսումնառության նպատակներին և նպաստում նրա ուսումնական առաջընթացին և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների զարգացմանը:

8. ԲՊՀ-ի աշխատողի արտագնա շարժունությունը կարող է իրականացվել նաև նրա սեփական նախաձեռնությամբ՝ այն դեպքում, եթե շարժունության ծրագրի նպատակն աշխատողի աշխատանքային գործառույթների շրջանակում է և այն իրականացվում է հավատարմագրված օտարերկրյա բուհում, որի հետ ԲՊՀ-ն կնքում է միջբուհական համագործակցության համաձայնագիր կամ ձեռք է բերում շարժունության գործընթացի կազմակերպման վերաբերյալ համապատասխան համաձայնություն:

9. Օտարերկրյա բուհի սովորողը կամ աշխատողը ևս կարող է սեփական նախաձեռնությամբ դիմել ԲՊՀ-ին իրականացնելու ներգնա շարժունության ծրագիր՝ նախապես ներկայացնելով շարժունության ծրագրի նկարագիրը, նպատակները, ժամկետները, դասընթացների ցանկը, ուղարկող օտարերկրյա բուհի համաձայնությունը, ինչպես նաև այլ հիմնավորող փաստաթղթեր, որոնք կարող է պահանջել ԲՊՀ-ն:

10. Կարգով սահմանված արտագնա շարժունության դրույթները տարածվում են ԲՊՀ-ի բոլոր աշխատողների և բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում և ուսուցման բոլոր ձևերով (առկա, հեռակա) ուսումնառող սովորողների վրա:

11. Արտագնա շարժունության մեջ ներգրավված ԲՊՀ-ի սովորողները շարժունության ծրագրի ընթացքում պահպանում են իրենց՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կամ պետության կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) հիմունքներով սովորողի կարգավիճակը, իսկ աշխատողները՝ իրենց զբաղեցրած պաշտոնը:

12. Ներգնա շարժունության մասնակից օտարերկրյա բուհի սովորողը կամ աշխատողը ԲՊՀ-ում պետք է անցկացնի համատեղ ծրագրի, շարժունության միջբուհական համաձայնագրով սահմանված կամ շարժունության գործընթացի կազմակերպման շուրջ ձեռք բերված համաձայնությունը համապատասխան ժամանակահատված:

III. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐժՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

13. Սովորողի կամ աշխատողի միջազգային շարժունությունը՝ կախված հյուրընկալող բուհում գտնվելու ժամանակահատվածից, կարող է լինել կարճատև և երկարատև:

14. **Կարճատև** արտագնա շարժունությունն ենթադրում է սովորողի կամ աշխատողի մասնակցությունը շարժունության ծրագրին ոչ ավել քան մեկ ամիս ժամանակահատվածով:

15. **Երկարատև** արտագնա շարժունությունն ենթադրում է սովորողի և աշխատողի մասնակցությունը շարժունության ծրագրին մեկ ամսից ավել ժամանակահատվածով:

16. Ուսումնառության նպատակով շարժունության ծրագրին սովորողի մասնակցության դեպքում՝ դրա ավարտին հյուրընկալող բուհը նրան տալիս է ակադեմիական տեղեկանք, որում նշվում է Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգի (այսուհետ՝ ԿՓԿՀ) համաձայն կուտակված կրեդիտների քանակը, ժամաքանակները և ստացած գնահատականները: Այլ նպատակով շարժունության ծրագրին մասնակցելու դեպքում՝ վերջինիս ավարտին հյուրընկալող բուհը սովորողին տրամադրում է շարժունության համապատասխան վկայական: Տրամադրված ակադեմիական տեղեկանքը կամ վկայականը սովորողը ներկայացնում է ուղարկող բուհ:

17. Շարժունության ծրագրին աշխատողի մասնակցության դեպքում՝ ծրագրի ավարտին հյուրընկալող բուհը նրան տրամադրում է շարժունության համապատասխան վկայական, որն աշխատողը ներկայացնում է ուղարկող բուհ:

18. Արտագնա շարժունության ծրագրերը կարող են լինել հետևյալ տեսակների՝

1) **նպատակային**, երբ սովորողի կամ աշխատողի մասնակցությունը շարժունության ծրագրին ուղղված է հյուրընկալող օտարերկրյա բուհի հետ որոշակի կրթական կամ այլ ծրագրի համատեղ իրականացմանը, ԲՊՀ-ի կամ նրա կառուցվածքային որևէ ստորաբաժանման ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործմանը,

2) **համագործակցային**, երբ ԲՊՀ-ի որևէ կառուցվածքային ստորաբաժանման նախաձեռնած շարժունության ծրագիրը նպատակաուղղված է ԲՊՀ-ի և օտարերկրյա բուհի համապատասխան ստորաբաժանման միջև համագործակցության խթանմանը կամ ընդլայնմանը, որի դեպքում ծրագրին մասնակից սովորողի կամ աշխատողի ընտրությունն իրականացնում է տվյալ ստորաբաժանումը,

3) **մրցութային**, երբ շարժունության ծրագրին մասնակցելու համար ԲՊՀ-ի սովորողի կամ աշխատողի ընտրությունն իրականացվում է մրցութային եղանակով՝ ապահովելով նրա մասնագիտական որակների համապատասխանությունը ծրագրով սահմանված պահանջներին:

19. Սույն կարգով չկարգավորող արտագնա շարժունության այլ տեսակները կամ հյուրընկալող բուհի կողմից առաջարկվող շարժունության կազմակերպման այլ վավերապայմանները, քննարկվում են ԲՊՀ-ի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից և ներկայացվում ռեկտորին՝ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

IV. ԱՐՏԱԳՆԱ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

20. ԲՊՀ-ի արտագնա շարժունության ծրագրերի ֆինանսավորումը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1) տեղական և օտարերկրյա կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի միջոցներով և կրթաթոշակներով,

2) ԲՊՀ-ի կողմից իրագործվող միջազգային համագործակցության ծրագրերով նախատեսված նպատակային ֆինանսավորմամբ,

3) հյուրընկալող օտարերկրյա բուհի ֆինանսական միջոցներով,

4) ՀՀ և օտարերկրյա պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներով,

5) շարժունության ծրագրի մասնակցի անձնական միջոցներով՝ իր դիմումի հիման վրա:

21. Արտագնա շարժունության ծրագրին մասնակցության դեպքում վճարովի համակարգի սովորողն ամբողջությամբ վճարում է ՄԿԾ-ով նախատեսված կիսամյակի վարձավճարը՝ համաձայն ԲՊՀ-ի և նրա միջև կնքված պայմանագրով սահմանված պայմանների և ժամկետների:

22. Արտագնա շարժունության ծրագրին մասնակցության դեպքում, անվճար համակարգի սովորողը պահպանում է մրցության կարգով պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսումնառության շրջափոխմանը (ռոտացիային) մասնակցելու իր իրավունքը՝ հիմք ընդունելով հյուրընկալող օտարերկրյա բուհում կուտակած ԿՓԿԿ կրեդիտների և ստացած գնահատականների ճանաչման և փոխանցման արդյունքները:

V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

23. Արտագնա կամ ներգնա շարժունության ծրագրեր կարող են նախաձեռնել ԲՊՀ-ի ֆակուլտետները, ամբիոնները, գիտաուսումնական կենտրոնները (այսուհետ՝ ԳՈՒԿ) և կառուցվածքային այլ ստորաբաժանումները, այդ թվում՝ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության (այսուհետ՝ ԱԿՄՀ) վարչությունը:

24. Արտագնա կամ ներգնա շարժունության բոլոր ծրագրերը համակարգում է ԱԿՄՀ վարչությունը՝ անկախ նրանից, թե կառուցվածքային որ ստորաբաժանումն է այն նախաձեռնել կամ իրականացնում:

25. Արտագնա կամ ներգնա շարժունության բոլոր ծրագրերի ինստիտուցիոնալ համակարգողը ԱԿՄՀ վարչության պետն է:

26. Կառուցվածքային ստորաբաժանումն արտագնա կամ ներգնա շարժունության ծրագիր և համապատասխան միջբուհական համագործակցության համաձայնագրի ստորագրում նախաձեռնելուց առաջ նախապես քննարկում և համաձայնեցնում է դրանք ԱԿՄՀ և ֆինանսական վարչությունների ու իրավաբանական բաժնի հետ՝ ռեկտորի հաստատմանը ներկայացնելու համար:

27. Արտագնա և ներգնա շարժունության ծրագրի տեղեկատվական, մեթոդաբանական և կազմակերպական բնույթի աշխատանքները պլանավորում և իրականացնում են նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումն ու ԱԿՄՀ վարչությունը համատեղ: Նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը վարում է նամակագրությունը օտարերկրյա բուհի հետ, կազմում շարժունության ծրագրի տեղեկատվական - մեթոդաբանական փաթեթը և տրամադրում ԱԿՄՀ վարչությանը, որն էլ իր հերթին, նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանման հետ

համագործակցությամբ, կազմակերպում է շարժունության ծրագրի հետ կապված հետագա գործընթացները:

28. Մրցութային կարգով իրականացվող արտագնա շարժունության ծրագրի տեղեկատվական փաթեթը ներառում է ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը, հայտարարության տեքստը, ծրագրի մասնակցին ներկայացվող պահանջները, մասնակցության համար ներկայացվող դիմումի ձևը (Հավելված 1) և կից պահանջվող փաստաթղթերի ցանկը, դիմումները ներկայացնելու վերջնաժամկետը, մրցույթի մասնակիցների ընտրության չափանիշները և ծրագրին առնչվող այլ անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկատվություն:

29. Արտագնա շարժունության ծրագրի հետ կապված գործընթացները, ներառյալ՝ հայտարարության պատրաստումը, տարածումը, ծրագրին դիմողների փաստաթղթերի հավաքագրումը, ընտրություն իրականացնող հանձնաժողովի անդամների առաջադրումը, ծրագրին մասնակցելու համար թեկնածուների ընտրության կազմակերպումն ու արդյունքների ամփոփումը և այլն, իրականացնում է ԱԿՄՀ վարչությունը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանման հետ համատեղ:

30. Արտագնա շարժունության ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԲՊՀ-ի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև կարող է տարածվել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների սոցիալական ցանցերում առկա էջերի, տեղեկատվական սեմինարների, էլեկտրոնային նամակների և տեղեկատվության տարածման այլ միջոցներով:

31. Մրցութային կարգով իրականացվող արտագնա շարժունության ծրագրին մասնակցության դիմումների ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո, ռեկտորի հրամանով ձևավորվում է մրցութային հանձնաժողով, որը ներառում է ներկայացուցիչներ համապատասխան ֆակուլտետներից, ԱԿՄՀ վարչությունից, ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումից, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այլ կառուցվածքային ստորաբաժանումներից՝ հիմք ընդունելով շարժունության ծրագրի նպատակները և առանձնահատկությունները:

32. Որոշ դեպքերում, երկկողմ համաձայնությամբ, արտագնա շարժունության ծրագրի մասնակցության մրցույթը կարող է կազմակերպել հյուրընկալող օտարերկրյա բուհը, որը, նման պարագայում, տրամադրում է այդ փաստը հավաստող գրություն:

33. Մրցութային հանձնաժողովը արտագնա շարժունության ծրագրի մասնակցի ընտրությունը կատարում է հիմք ընդունելով հետևյալ չափանիշները՝

33.1. սովորողի դեպքում՝

1) առաջադիմությունը (միջին որակական գնահատականը (ՄՈԳ))՝ նախապատվությունը տալով բարձր ՄՈԳ ունեցողին,

2) շարժունության ծրագրով պահանջվող օտար լեզվի իմացության մակարդակը (նվազագույնը՝ B1 մակարդակ),

3) շահադրդվածությունը (մոտիվացիան),

4) նախկինում շարժունության ծրագրերին մասնակցությունը՝ նախապատվությունը տալով շարժունության ծրագրերի նախկինում չմասնակցած կամ մյուս դիմողների համեմատությամբ ավելի քիչ մասնակցած թեկնածուին,

33.2. աշխատողի դեպքում՝

1) շարժունության ծրագրին մասնակցության համար պահանջվող ծրագրային առաջարկի առկայությունը և դրա համապատասխանությունը ԲՊՀ-ի ռազմավարական և տվյալ կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրական նպատակներին ու խնդիրներին, ինչպես նաև շարժունության ծրագրի նպատակներին դիմողի աշխատանքային գործառույթների համապատասխանությունը,

2) շարժունության ծրագրով պահանջվող օտար լեզվի իմացության մակարդակը (նվազագույնը՝ B2 մակարդակ),

3) շահադրդվածությունը,

4) նախկինում շարժունության ծրագրերին մասնակցությունը՝ նախապատվությունը տալով շարժունության ծրագրերի նախկինում չմասնակցած կամ մյուս դիմողների համեմատությամբ ավելի քիչ մասնակցած թեկնածուին:

34. Արտագնա շարժունության ծրագրին մասնակից թեկնածուի տվյալները, իսկ որոշ դեպքերում հյուրընկալող բուհի պահանջով նաև մասնակցի ընտրության վերաբերյալ արձանագրությունը և այլ պահանջվող փաստաթղթեր, նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը ներկայացնում է հյուրընկալող օտարերկրյա բուհին հաստատման նպատակով՝ նամակագրության մեջ պարտադիր ներառելով ԱԿՄՀ վարչությունը: Շարժունության ծրագրին մասնակցության համար հիմք է հանդիսանում հյուրընկալող բուհի կողմից տրված հաստատումը և համապատասխան հրավերի նամակը:

VI. ԱՐՏԱԳՆԱ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԲՊՀ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ԲՊՀ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԳՆԱ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

35. ԲՊՀ-ի և օտարերկրյա բուհի կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրով ուսումնառելու դեպքում, սովորողը ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների (մոդուլների) մի մասը ուսումնառում է ԲՊՀ-ում, մյուս մասը՝ հյուրընկալող օտարերկրյա բուհում՝ համաձայն համատեղ կրթական ծրագրի համաձայնագրի դրույթների և ուսումնական պլանի: Համատեղ կրթական ծրագրով ուսումնառելու համար սովորողը ընտրվում է մրցութային կարգով կամ առաջադրվում համապատասխան ամբիոնի վարիչի կամ ԳՈՒԿ-ի ղեկավարի կողմից՝ ֆակուլտետի ղեկանի համաձայնությամբ՝ ելնելով սովորողի առաջադիմությունից:

36. Միջբուհական համագործակցության համաձայնագրով նախատեսված ակադեմիական փոխանակման ծրագրի շրջանակներում հյուրընկալող օտարերկրյա բուհ ընտրված սովորողի այցն ապահովելու նպատակով.

1) սովորողը, շարժունության ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանման աջակցությամբ, կազմում և համապատասխան ֆակուլտետի ղեկանին ներկայացնում է դասընթացների (մոդուլների) ցանկը, որոնցով պետք է ուսումնառի հյուրընկալող օտարերկրյա բուհում կամ այն ծրագրի (հետազոտական աշխատանքների, պրակտիկայի, գիտաժողովի, սեմինարի, ամառային դպրոցի, այլ) նկարագիրը (օրակարգը), որը սովորողը պետք է իրականացնի կամ որին պետք է մասնակցի հյուրընկալող օտարերկրյա բուհում,

2) սեփական նախաձեռնությամբ շարժունության ծրագիր իրականացնելու դեպքում սովորողն է համապատասխան ֆակուլտետի դեկանին ներկայացնում դասընթացների (մոդուլների) ցանկը, որոնցով նա պետք է ուսումնառի հյուրընկալող օտարերկրյա բուհում կամ այն ծրագրի նկարագիրը (օրակարգը), որը նա պետք է իրականացնի կամ որին պետք է մասնակցի հյուրընկալող օտարերկրյա բուհում,

3) ֆակուլտետի դեկանը, ուսումնագիտական հարցերով պրոռեկտորի և համապատասխան ամբիոնի վարիչի կամ ԳՈՒԿ-ի ղեկավարի հետ ուսումնասիրում և քննարկում է դասընթացների (մոդուլների) ցանկը կամ այլ նպատակով իրականացվող շարժունության ծրագրի նկարագիրը (օրակարգը) և զեկուցագրով ռեկտորին ներկայացնում է գրավոր եզրակացություն՝ սովորողի մասնակցության նպատակահարմարության մասին, որն այնուհետև քննարկվում է ռեկտորատի նիստում,

4) ֆակուլտետի դեկանն իր եզրակացությամբ կարող է երաշխավորել կամ մերժել սովորողի կողմից շարժունության ծրագրի իրականացումը՝ հիմք ընդունելով հյուրընկալող օտարերկրյա բուհի դասընթացների (մոդուլների) համադրելիությունն այն ՄԿԾ-ի դասընթացներին և ուսումնառության վերջնարդյունքներին, որով սովորողն ուսումնառում է ԲՊՀ-ում, իսկ այլ նպատակով իրականացվող շարժունության ծրագրի դեպքում՝ վերջինիս նկարագրի (օրակարգի) համապատասխանությունը ԲՊՀ-ի ՄԿԾ-ի նպատակներին կամ սովորողի ուսումնական առաջընթացին ու մասնագիտական գիտելիքների ու հմտությունների զարգացմանը,

5) սովորողի կողմից շարժունության ծրագրի իրականացումը մերժելու դեպքում ֆակուլտետի դեկանը ներկայացվող եզրակացությանը կցում է գրավոր հիմնավորում՝ մերժման պատճառների մասին:

37. Սովորողի կողմից շարժունության ծրագրի իրականացման վերաբերյալ ռեկտորատի դրական որոշման և հյուրընկալող օտարերկրյա բուհից նրա թեկնածության հաստատման դեպքում՝ ֆակուլտետի դեկանատը կազմում է համապատասխան հրամանի նախագիծ և սահմանված կարգով ներկայացնում ռեկտորի հաստատմանը:

38. Ռեկտորի հրամանի հիման վրա շարժունության ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումն իրականացնում է դրա հետ կապված հետագա աշխատանքները, մասնավորապես.

1) պատրաստում է եռակողմ համաձայնագիր ԲՊՀ-ի, հյուրընկալող օտարերկրյա բուհի և սովորողի միջև կամ այլ պահանջվող փաստաթղթեր, համաձայնեցնում դրանք ԱԿՄՀ վարչության հետ (եթե վերջինս նախաձեռնող ստորաբաժանումը չէ) և ներկայացնում ռեկտորի կամ ուսումնագիտական հարցերով պրոռեկտորի հաստատմանը,

2) շարժունության ծրագրի իրականացման ժամանակահատվածում շարժունության պայմաններում որևիցե փոփոխության դեպքում, անհապաղ տեղեկացնում է այդ մասին ռեկտորին, ուսումնագիտական հարցերով պրոռեկտորին, համապատասխան ֆակուլտետի դեկանին և ԱԿՄՀ վարչությանը՝ անհրաժեշտ քայլեր նախաձեռնելու նպատակով,

3) շարժունության ծրագրի իրականացման ժամանակահատվածում մշտական կապ է պահպանում սովորողի հետ և տրամադրում անհրաժեշտ խորհրդատվություն:

39. Շարժունության ծրագրից վերադարձած սովորողը համապատասխան ֆակուլտետի դեկանին ներկայացնում է դիմում (Հավելված 2)՝ կցելով հյուրընկալող օտարերկրյա բուհի տրամադրած ակադեմիական տեղեկանքը, որում նշված են ուսումնառած դասընթացները (մոդուլները), ստացած գնահատականները և կուտակած ԿՓԿԿ կրեդիտները կամ շարժունության համապատասխան վկայականը, եթե դրա նպատակն եղել է այլ, քան ուսումնառությունը: Դիմումին սովորողը կցում է նաև հետշարժունության փաստաթղթերը, եթե այդպիսիք տրամադրվել են հյուրընկալող բուհի կողմից: Ֆակուլտետի դեկանատը նշված փաստաթղթերի պատճենները տալիս է նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանմանը, ուսումնագիտական հարցերով պրոռեկտորին և ԱԿՄՀ վարչությանը:

40. Հիմք ընդունելով սովորողի ներկայացրած դիմումը և կից փաստաթղթերը՝ ֆակուլտետի դեկանատը պատրաստում է հյուրընկալող օտարերկրյա բուհում նրա ուսումնառած դասընթացների (մոդուլների) և կուտակած ԿՓԿԿ կրեդիտների ճանաչման ու փոխանցման, ինչպես նաև փոխարկված գնահատականների փաստաթուղթ կամ կատարում է սովորողի իրականացրած շարժունության այլ ծրագրի արդյունքների գնահատում:

41. Սովորողի կուտակած ԿՓԿԿ կրեդիտները կարող են ճանաչվել ամբողջապես կամ մասնակի՝ ելնելով հյուրընկալող օտարերկրյա բուհում ուսումնառած դասընթացների (մոդուլների) ԲՊՀ-ի համապատասխան ՄԿԾ-ի դասընթացների հետ ամբողջական կամ մասնակի համադրելիությունից:

42. Արձակուրդային շրջանում սեփական նախաձեռնությամբ կարճատև արտագնա շարժունության ծրագրի մասնակցելու դեպքում, սովորողն այդ մասին գրավոր տեղեկացնում է համապատասխան ֆակուլտետի դեկանին:

43. Արտագնա շարժունության ծրագրից վերադառնալուց հետո 10-օրյա ժամկետում սովորողը շարժունության ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանմանը և ԱԿՄՀ վարչությանը ներկայացնում է շարժունության ծրագրի լուսաբանման համար գրավոր տեղեկատվություն՝ ըստ սահմանված ձևաչափի (Հավելված 3):

44. Միջազգային շարժունության ծրագիր իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով ներառվում է սովորողին շնոհրվող դիպլոմին կից տրվող դիպլոմի հավելվածի «6.1. Հավելյալ տեղեկատվություն» բաժնում:

ԲՊՀ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԳՆԱ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

45. Միջբուհական համագործակցության համաձայնագրի շրջանակներում ակադեմիական փոխանակման կամ շարժունության այլ ծրագրով աշխատողի այցը հյուրընկալող օտարերկրյա բուհ ապահովելու նպատակով.

1) աշխատողի կառուցվածքային ստորաբաժանման կամ անմիջական ղեկավարը (եթե աշխատողը կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար է) ռեկտորին զեկուցագրով ներկայացնում է գրավոր եզրակացություն աշխատողի կողմից շարժունության ծրագիր իրականացնելու նպատակահարմարության մասին՝ կցելով շարժունության ծրագրի մասին ամբողջական տեղեկատվությունը, որը ստանում է

նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումից, ինչպես նաև աշխատողի ընտրության արձանագրությունը կամ առաջադրման հիմնավորումը,

2) սեփական նախաձեռնությամբ շարժունության ծրագիր իրականացնելու դեպքում աշխատողն է իր ստորաբաժանման կամ անմիջական ղեկավարին ներկայացնում ծրագրի մասին ամբողջական տեղեկատվությունը և ծրագրի իրականացման նպատակները,

3) փաստաթղթերի փաթեթի մեկ օրինակ տրամադրվում է ԱԿՄՀ վարչությանը,

4) զեկուցագիրը սահմանված կարգով նախապես քննարկվում և համաձայնեցվում է համապատասխան պրոռեկտորի, իսկ դասախոսի դեպքում նաև համապատասխան ֆակուլտետի դեկանի հետ և այնուհետև քննարկվում ռեկտորատի նիստում,

5) աշխատողի կառուցվածքային ստորաբաժանման կամ անմիջական ղեկավարն իր եզրակացությամբ կարող է երաշխավորել կամ մերժել աշխատողի կողմից շարժունության ծրագրի իրականացումը՝ ելնելով վերջինիս նպատակներին աշխատողի աշխատանքային գործառնությունների համապատասխանությունից, ծրագրի ժամկետներից և այլ հանգամանքներից,

6) աշխատողի կողմից շարժունության ծրագրի իրականացումը մերժելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման կամ անմիջական ղեկավարը ներկայացվող եզրակացությանը կցում է գրավոր հիմնավորում՝ մերժման պատճառների մասին,

7) աշխատողի կողմից շարժունության ծրագրի իրականացման վերաբերյալ ռեկտորատի դրական որոշման հիման վրա՝ ընտրված կամ առաջադրված աշխատողի թեկնածությունը հաստատման նպատակով նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը ներկայացնում է հյուրընկալող օտարերկրյա բուհին՝ նամակագրության մեջ ներառելով ԱԿՄՀ վարչությունը,

8) ընտրված կամ առաջադրված աշխատողի թեկնածությունը հյուրընկալող օտարերկրյա բուհի կողմից հաստատվելու դեպքում, աշխատողի կողմից շարժունության ծրագրի իրականացումը ձևակերպվում է որպես գործուղում կամ աշխատանքային այց,

9) աշխատողի գործուղումը կամ աշխատանքային այցը ձևակերպելու համար կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կազմում է համապատասխան հրամանի նախագիծ՝ առաջարկելով ժամանակավոր փոխարինող և կցելով հյուրընկալող օտարերկրյա բուհի հրավերի նամակը:

46. Աշխատողի սեփական նախաձեռնությամբ շարժունության ծրագրի իրականացումը, հյուրընկալող օտարերկրյա բուհի հրավերի հիման վրա, ձևակերպվում է որպես գործուղում կամ աշխատանքային այց՝ կախված շարժունության ծրագրի նպատակից և ժամկետներից, որը չի ֆինանսավորվում ԲՊՀ-ի միջոցներից: Շարժունության ծրագրին մասնակցելու համար աշխատողը կարող է նաև ներկայացնել արձակուրդի դիմում:

47. Շարժունության ծրագրից վերադարձած աշխատողը ներկայացնում է ծրագրի շրջանակներում իր կատարած աշխատանքների և դրանց արդյունքների մասին հաշվետվություն՝ կցելով օտարերկրյա բուհի կողմից տրված շարժունության վկայականը:

48. Շարժունության ծրագրից վերադառնալուց հետո 10-օրյա ժամկետում աշխատողը շարժունության ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանմանը և ԱԿՄՀ վարչությանը ներկայացնում է շարժունության ծրագրի լուսաբանման համար գրավոր տեղեկատվություն՝ ըստ սահմանված ձևաչափի (Հավելված 4):

VII. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՎԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՆԱ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

49. ԲՊՀ-ում շարժունության ծրագիր իրականացնող սովորողի կամ աշխատողի թեկնածությունն առաջադրում է ուղարկող օտարերկրյա բուհը:

50. Որոշ դեպքերում, երկկողմ համաձայնությամբ, շարժունության ծրագիր իրականացնողի ընտրությունը կարող է կատարել ԲՊՀ-ն:

51. Օտարերկրյա բուհի սովորողը կամ աշխատողը կարող է ԲՊՀ-ին դիմել իրականացնելու շարժունության ծրագիր նաև սեփական նախաձեռնությամբ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՎԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՆԱ ՇԱՐՇՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

52. ԲՊՀ-ում օտարերկրյա բուհի սովորողի շարժունության ծրագիրն իրականացնելու նպատակով այն նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը օտարերկրյա ուղարկող բուհի հետ վարում է նամակագրություն, որի մեջ ներառում է ԱԿՄՀ վարչությունը, և ստանում ԲՊՀ այցելող սովորողի շարժունության ծրագրի հետ կապված անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը, այդ թվում՝

- 1) սովորողի դիմում-հայտը,
- 2) շարժունության ծրագրի նպատակը,
- 3) այն ՄԿԾ-ի նկարագիրը՝ ներառյալ դասընթացների (մոդուլների) ցանկը, դրանց հատկացված կրեդիտները և ժամաքանակներն ու ուսումնական պլանը, որով սովորողն ուսումնառում է ուղարկող օտարերկրյա բուհում,
- 4) ուսումնառության նպատակով ԲՊՀ այցելելու դեպքում՝ այն ՄԿԾ-ի անվանումը և առաջարկվող դասընթացների ցանկը, որով սովորողը պետք է ուսումնառի ԲՊՀ-ում,
- 5) շարժունության ծրագրի տևողությունը, ժամանման և մեկնման ժամկետները,
- 6) ուսումնառության նպատակով ԲՊՀ այցելելու դեպքում՝ ուղարկող օտարերկրյա բուհի կողմից տրամադրված ակադեմիական տեղեկանքը,
- 7) համապատասխան օտար լեզվի իմացության մակարդակը հավաստող փաստաթուղթը,
- 8) ըստ անհրաժեշտության սովորողի վերաբերյալ այլ անձնական տվյալներ՝ ներառյալ անձնագրի պատճեն:

53. Ստացված փաստաթղթերի փաթեթի մեկական օրինակ նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը տալիս է ուսումնագիտական հարցերով պրոռեկտորին, համապատասխան ֆակուլտետի դեկանին և ԱԿՄՀ վարչությանը:

54. Սեփական նախաձեռնությամբ ԲՊՀ դիմած օտարերկրյա բուհի սովորողն ինքն է ներկայացնում ԲՊՀ-ին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, որի մեկական

օրինակ տրամադրվում է ուսումնագիտական հարցերով պրոռեկտորին, համապատասխան ֆակուլտետի դեկանին և ԱԿՄՀ վարչությանը:

55. Համապատասխան ֆակուլտետի դեկանը ուսումնագիտական հարցերով պրոռեկտորի և համապատասխան ամբիոնի վարիչի կամ ԳՈՒԿ-ի ղեկավարի հետ ուսումնասիրում և քննարկում է ներկայացված փաստաթղթերը: Եթե ԲՊՀ այցելող օտարերկրյա բուհի սովորողի շարժունության նպատակն ուսումնառությունն է, ապա կատարվում է ուղարկող օտարերկրյա բուհի և ԲՊՀ-ի համապատասխան ՄԿԾ-ների (որով այցելող սովորողը ուսումնառում է ուղարկող բուհում և ցանկանում ուսումնառել ԲՊՀ-ում), դրանց դասընթացների (մոդուլների) ու ուսումնառության վերջնարդյունքների համադրում:

56. Համատեղ քննարկման և համադրման արդյունքում՝ համապատասխան ֆակուլտետի դեկանը ռեկտորին զեկուցագրով ներկայացնում է գրավոր եզրակացություն օտարերկրյա բուհի սովորողի ԲՊՀ-ում շարժունության ծրագիր իրականացնելու նպատակահարմարության մասին, որը այնուհետև քննարկվում է ռեկտորատի նիստում:

57. Ֆակուլտետի դեկանն իր եզրակացությամբ կարող է երաշխավորել կամ մերժել օտարերկրյա բուհի սովորողի կողմից ԲՊՀ-ում շարժունության ծրագրի իրականացումը՝ հիմք ընդունելով ուղարկող օտարերկրյա բուհի և ԲՊՀ-ի համապատասխան ՄԿԾ-ների և դասընթացների (մոդուլների) համադրելիությունը, եթե այցելող սովորողի շարժունության ծրագրի նպատակն ուսումնառությունն է, իսկ այլ նպատակով իրականացվող շարժունության ծրագրի դեպքում՝ վերջինիս նկարագրի (օրակարգի) համապատասխանությունը ուղարկող օտարերկրյա բուհի ՄԿԾ-ին, սովորողի ուսումնառության նպատակներին կամ նրա ուսումնական առաջընթացին, մասնագիտական գիտելիքներին ու հմտություններին դրա նպաստումը:

58. Օտարերկրյա բուհի սովորողի կողմից ԲՊՀ-ում շարժունության ծրագրի իրականացումը մերժելու դեպքում ֆակուլտետի դեկանը ներկայացվող եզրակացությանը կցում է գրավոր հիմնավորում՝ մերժման պատճառների մասին:

59. ԲՊՀ-ում շարժունության ծրագրի իրականացնելու վերաբերյալ ռեկտորատի դրական որոշման հիման վրա համապատասխան ֆակուլտետի դեկանատը և ուսումնական բաժինը համատեղ կազմում են այն դասընթացների (մոդուլների) ցանկը, որոնք առաջարկում են օտարերկրյա բուհի սովորողին՝ ԲՊՀ-ում ուսումնառելու համար:

60. Առաջարկված դասընթացների (մոդուլների) ցանկը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը տրամադրում է օտարերկրյա ուղարկող բուհին և ԱԿՄՀ վարչությանը կամ այն ուղղակիորեն տրամադրվում է օտարերկրյա բուհի սովորողին, եթե նա դիմել է ԲՊՀ սեփական նախաձեռնությամբ:

61. Ռեկտորատի դրական որոշման և ուղարկող օտարերկրյա բուհից համաձայնության ստացման դեպքում՝ դեկանատը կազմում է համապատասխան հրամանի նախագիծ և սահմանված կարգով ներկայացնում ռեկտորի հաստատմանը՝ օտարերկրյա բուհի սովորողի ուսումնառության գործընթացը կազմակերպելու նպատակով:

62. Շարժունության ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը (անկախ դրա նպատակից) համապատասխան ֆակուլտետի դեկանատի հետ

կազմակերպում է ծրագրի իրականացման հետ կապված հետագա աշխատանքները, մասնավորապես.

1) ԲՊՀ-ի, ուղարկող օտարերկրյա բուհի և այցելող սովորողի միջև եռակողմ համաձայնագիրը կամ այլ պահանջվող փաստաթղթերը համաձայնեցնում է ԱԿՄՀ վարչության հետ (եթե վերջինս նախաձեռնող ստորաբաժանումը չէ) և ներկայացնում ռեկտորի կամ ուսումնագիտական հարցերով պրոռեկտորի հաստատմանը,

2) շարժունության ծրագրի իրականացման ժամանակահատվածում շարժունության պայմաններում որևիցե փոփոխության դեպքում, անհապաղ տեղեկացնում է այդ մասին ուղարկող օտարերկրյա բուհին և այցելող սովորողին՝ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար,

3) շարժունության ծրագրի իրականացման ժամանակահատվածում ԱԿՄՀ վարչության հետ համատեղ օտարերկրյա բուհի սովորողին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն:

63. Շարժունության ծրագրի ավարտին ԲՊՀ-ն օտարերկրյա բուհի սովորողին տալիս է ակադեմիական տեղեկանք, եթե շարժունության ծրագրի նպատակն ուսումնառությունն է, որում նշվում են ուսումնառած դասընթացները, ստացած գնահատականները, կուտակված ԿՓԿԿ կրեդիտները և ժամաքանակները, ինչպես նաև շարժունության վկայական: Եթե շարժունության նպատակն այլ է քան ուսումնառությունը, ապա շարժունության ծրագրի ավարտին ԲՊՀ-ն տալիս է այցելող սովորողին շարժունության համապատասխան վկայական:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՆԱ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

64. ԲՊՀ-ում օտարերկրյա բուհի աշխատողի շարժունության ծրագիրն իրականացնելու նպատակով այն նախաձեռնող ԲՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումն օտարերկրյա ուղարկող բուհի հետ վարում է նամակագրություն և ստանում ԲՊՀ այցելող աշխատողի շարժունության ծրագրի հետ կապված անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը, ներառյալ՝

1) աշխատողի դիմում-հայտը,

2) շարժունության ծրագրի նպատակը,

3) շարժունության ծրագրի տևողությունը, ժամանման և մեկնման ժամկետները,

4) ըստ անհրաժեշտության աշխատողի վերաբերյալ այլ անձնական տվյալներ՝ ներառյալ անձնագրի պատճեն:

65. Ստացված փաստաթղթերի փաթեթի մեկական օրինակ նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը տալիս է համապատասխան պրոռեկտորին և ԱԿՄՀ վարչությանը, իսկ եթե այցելող աշխատողը դասախոս է, նաև համապատասխան ֆակուլտետի ղեկանին:

66. Շարժունության ծրագիր իրականացնելու համար սեփական նախաձեռնությամբ ԲՊՀ դիմած օտարերկրյա բուհի աշխատողն ինքն է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, որի մեկական օրինակ կրկին տրամադրվում է համապատասխան պրոռեկտորին և ԱԿՄՀ վարչությանը, իսկ եթե այցելող աշխատողը դասախոս է, նաև համապատասխան ֆակուլտետի ղեկանին:

67. Համապատասխան պրոռեկտորը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները համատեղ քննարկում են օտարերկրյա բուհի աշխատողի ԲՊՀ-ում շարժունության ծրագիր իրականացնելու նպատակահարմարությունը: Քննարկման արդյունքներով կազմվում է գրավոր եզրակացություն՝ շարժունության ծրագրի իրականացման նպատակահարմարության մասին, որը համապատասխան պրոռեկտորը զեկուցագրով ներկայացվում է ռեկտորին, ինչն այնուհետև քննարկվում է ռեկտորատի նիստում:

68. Ներկայացված եզրակացությամբ օտարերկրյա բուհի աշխատողի ԲՊՀ-ում շարժունության ծրագրի իրականացումը կարող է երաշխավորվել կամ մերժվել՝ ելնելով շարժունության ծրագրի նպատակներին նրա աշխատանքային գործառույթների համապատասխանությունից, ծրագրի ժամկետներից և այլ հանգամանքներից: Շարժունության ծրագրին աշխատողի մասնակցությունը մերժելու դեպքում ներկայացվող եզրակացությանը կցվում է գրավոր հիմնավորում՝ մերժման պատճառների մասին:

69. Շարժունության ծրագրին աշխատողի մասնակցության վերաբերյալ ռեկտորատի դրական որոշման հիման վրա՝ նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը գրավոր տեղեկացնում է այդ մասին օտարերկրյա ուղարկող բուհին՝ տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունը: Նամակագրության մեջ ներառվում է ԱԿՄՀ վարչությունը:

70. Շարժունության ծրագիրը նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանումը (անկախ դրա նպատակից) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ կազմակերպում է ծրագրի իրականացման հետ կապված հետագա աշխատանքները:

71. Շարժունության ծրագրի ավարտից հետո ԲՊՀ-ում շարժունության ծրագիր իրականացնող օտարերկրյա բուհի աշխատողին ԲՊՀ-ն տալիս է շարժունության համապատասխան վկայական:

VIII. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՈՒՄ

72. Ֆորսմաժորային (անհաղթահարելի ուժի) իրավիճակներից կամ այլ չկանխատեսված հանգամանքներից ելնելով՝ շարժունության ծրագիրը կարող է չեղարկվել կամ հետաձգվել որոշակի կամ անորոշ ժամկետով: Նման պարագայում, ելնելով նոր ժամկետներից և հանգամանքներից, շարժունության ծրագիր իրականացնելու համար ընտրված կամ առաջադրված մասնակիցը կարող է կողմերի համաձայնությամբ պահպանել իր մասնակցության կարգավիճակը կամ կարող է կատարվել նոր մասնակցի ընտրություն կամ առաջադրում:



**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

20__/20__ ուս.տարվա շարժունության մասնակցության դիմում

1. Անձնական տվյալներ

1.1	Անուն, ազգանուն, հայրանուն	
1.2	Ծննդյան ամսաթիվ Օր/ամիս/տարեթիվ	
1.3	Հեռախոս (քաղ./բջջ.)	
1.4	Էլ.փոստի հասցե	
1.6	Կարգավիճակ <i>(ընտրել մեկը)</i>	Սովորող Դասախոս Վարչական աշխատող Ուսումնաօժանդակ կազմի աշխատող
1.7	Ֆակուլտետ, Մասնագիտություն, Կրթական ծրագիր, Կուրս, խումբ <i>(լրացվում է միայն սովորողի կողմից)</i>	
1.8	Ստորաբաժանում, Զբաղեցրած պաշտոն <i>(լրացվում է միայն աշխատողի կողմից)</i>	

2. Տեղեկություններ ուսումնագիտական գործունեության մասին¹ (սովորողի կողմից լրացվում է միայն առկայության դեպքում)

2.1	Առաջադիմություն Ակադեմիական տեղեկանք և ՄՈԳ <i>(լրացվում է միայն սովորողի կողմից)</i>	
-----	--	--

¹ Կցել ինքնակենսագրությունը, (CV), որում 2-րդ բաժնում պահանջվող տեղեկատվության առկայության դեպքում դաշտերը չեն լրացվում:



	<i>կողմից)</i>	
2.2	Մասնակցություն, բարեգործական, կամավորական և հասարակական բնույթի այլ ծրագրերի	
2.3	Մասնակցություն հայաստանյան և միջազգային օլիմպիադաների ու մրցույթների <i>(լրացվում է միայն սովորողի կողմից)</i>	
2.4	Տեղեկատվություն գիտական գործունեության մասին <i>(Նշել՝</i> <i>- գիտական աշխատության թեման,</i> <i>- գիտական աշխատանքի ղեկավարի անունը,</i> <i>- գիտական հոդվածների ցանկը,</i> <i>- ցանկացած այլ տեղեկատվություն գիտական գործունեության մասին</i>	
2.5	Օտար լեզվի իմացություն <i>(Նշել, թե ինչ լեզուների եք տիրապետում և դրանց տիրապետման մակարդակը՝ համաձայն «Լեզուների իմացության եվրոպական շրջանակի»)</i>	

3. Տեղեկատվություն շարժունության ծրագրի մասին

3.1	Շարժունության ծրագրի նպատակը և	
-----	---------------------------------------	--



	միջոցառման անվանումը (օրինակ՝ ուսումնառություն, դասավանդում, հետազոտական աշխատանք, վերապատրաստում, գիտաժողով, սեմինար, և այլն)	
3.2	Ծրագրի անցկացման վայրը (Երկիր, քաղաք)	
3.3	Ծրագրի ժամկետները	
3.4	Ծրագրի հակիրճ նկարագրությունը	
3.5	Ծրագրի մասին տեղեկատվության աղբյուրը (Ինչպե՞ս եք իմացել ծրագրի մասին)	
3.6	Մասնակցության նպատակը (ընտրել մեկը)	<input type="checkbox"/> ուսումնառություն <input type="checkbox"/> բանախոսում <input type="checkbox"/> դասավանդում <input type="checkbox"/> հետազոտական աշխատանքի կատարում <input type="checkbox"/> մասնակցություն գիտաժողովի, սեմինարի, աշխատաժողովի և այլն <input type="checkbox"/> պրակտիկա <input type="checkbox"/> վերապատրաստում <input type="checkbox"/> այլ, խնդրում ենք նշել
3.7	Ակնկալվող վերջնարդյունքները	
3.8.	Ֆինանսավորման աղբյուրը	



«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**20__/20__ ուսումնական տարվա ակադեմիական շարժունության
ուսումնառության ճանաչման դիմում**

Ես՝ _____

(անուն, ազգանուն, հայրանուն)

Ֆակուլտետ _____

Մասնագիտություն _____

ՄԿԾ _____

Որակավորում _____

Կուրս _____ Խումբ _____

Շարժունության ժամանակահատվածը _____ մինչև _____

Հյուրընկալող համալսարան _____

Երկիր _____

Կից ներկայացնում եմ ուսումնառության համաձայնագիրը, գնահատականների քաղվածքը և շարժունության վկայականը¹

¹ Առկայության դեպքում



Խնդրում եմ ճանաչել ստորև ներկայացված ուսումնառության արդյունքները՝

Հյուրընկալող համալսարանում			Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանում		
Դասընթացի (մոդուլի) անվանումը	Կրեդիտներ	Ժամաքանակ	Դասընթացի (մոդուլի) անվանումը	Կրեդիտներ	Ժամաքանակ

Ամսաթիվ, վայր _____

Ստորագրություն _____

Հավելված 3



**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԲՊՀ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓ
ԲՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ¹**

Անուն, ազգանուն	
Ուսման տարի, ֆակուլտետ, մասնագիտություն	
Միջազգային շարժունության ծրագրի անունը և ժամկետը	
Երկիր, քաղաք	
Ինչպե՞ս եք տեղեկացել շարժունության մասին և ինչու՞ որոշեցիք դիմել (խնդրում ենք նկարագրել գործընթացը):	
Խնդրում ենք ներկայացնել ԲՊՀ-ի և Ձեզ հյուրընկալող բուհի միջև տարբերությունները և նմանությունները առարկաների, դասավանդման, ուսումնառության, ուսանողական կյանքի և այլնի վերաբերյալ:	
Խնդրում ենք նկարագրել, թե ինչը Ձեզ ամենաշատը և ամենաքիչը դուր եկավ Ձեր փորձառության ընթացքում:	
Ի՞նչ տվեց Ձեզ այս փորձը (գիտելիք, հմտություններ, կարողականություններ, ընկերներ և այլն):	
Ինչպե՞ս եք կիրառելու այս փորձը Ձեր ուսման մեջ:	
Ի՞նչ խորհուրդ կտաք ուսնողներին, ովքեր դեռևս չունեն նման փորձ:	
Եթե ունեք այլ նկատառումներ, խնդրում ենք ներառել այստեղ:	

¹ Սույն ձևաչափի նպատակն է ներկայացնել մասնակիցների միջազգային շարժունության փորձը և լուսաբանել ԲՊՀ-ի կողմից տրամադրվող հնարավորությունները: Տեղեկատվությունը տրամադրելիս՝ խնդրում ենք հաշվի առնել, որ այն պետք է լինի ամբողջական նյութ, իսկ ներկայացված հարցերը ծառայում են որպես ուղղորդող հարցեր: Խնդրում ենք կցել 2-3 բարձրորակ լուսանկար՝ արված միջազգային շարժունության ընթացքում:



**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԲՊՀ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓ
ԲՊՀ-Ի ՊԴ ԿԱԶՄԻ և ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ¹**

Անուն, ազգանուն	
Ամբիոն/ստորաբաժանում, պաշտոն	
Միջազգային շարժունության ծրագրի անունը և ժամկետը	
Միջազգային շարժունության երկիրը, քաղաքը	
Ինչպե՞ս եք տեղեկացել շարժունության մասին և ինչու՞ որոշեցիք դիմել (խնդրում ենք նկարագրել գործընթացը):	
Խնդրում ենք ներկայացնել ԲՊՀ-ի և Ձեզ հյուրընկալող բուհի միջև տարբերությունները և նմանությունները դասավանդման, ուսանողների, ենթակառուցվածքների, հնարավորությունների և այլնի վերաբերյալ:	
Խնդրում ենք նկարագրել, թե ինչը Ձեզ ամենաշատը և ամենաքիչը դուր եկավ Ձեր փորձառության ընթացքում:	
Ի՞նչ տվեց Ձեզ այս փորձը (գիտելիք, հմտություններ, կարողականություններ, կապեր և այլն):	
Ինչպե՞ս եք կիրառելու այս փորձը Ձեր մասնագիտական գործունեության մեջ:	
Ի՞նչ խորհուրդ կտաք դասախոսներին/աշխատակիցներին, ովքեր դեռևս չունեն նման փորձ:	
Եթե ունեք այլ նկատառումներ, խնդրում ենք ներառել այստեղ:	

¹ Սույն ձևաչափի նպատակն է ներկայացնել մասնակիցների միջազգային շարժունության փորձը և լուսաբանել ԲՊՀ-ի կողմից տրամադրվող հնարավորությունները: Տեղեկատվությունը տրամադրելիս՝ խնդրում ենք հաշվի առնել, որ այն պետք է լինի ամբողջական նյութ, իսկ ներկայացված հարցերը ծառայում են որպես ուղղորդող հարցեր: Խնդրում ենք կցել 2-3 բարձրորակ լուսանկար՝ արված միջազգային շարժունության ընթացքում: